


**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



*Մարզկենտրոնը՝*  
ք. Նրագդան

*Տարածաշրջանները՝*  
Նրագդան,  
Կոտայք,  
Նաիրի

*Քաղաքները՝*  
Նրագդան,  
Աբովյան, Չարենցավան,  
Բյուրեղավան, Ծաղկաձոր,  
Եղվարդ,  
Նոր Հաճն

Տարածքը	2089 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	60
Քաղաքներ	7
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2011թ. հունվարի 1-ի դրությամբ	282.1 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	158.3 հազ.մարդ
գյուղական	123.8 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2010թ.	8.6%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	56.1%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	161667 հա
այդ թվում՝ վարելահողեր	38057 հա

**ՀՀ Կոտայքի** մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

**ՀՀ Կոտայքի մարզի** տարածքով են հոսում Հրազդան և Ագատ գետերը: **Հրազդան գետը** (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կան 340 վտակներ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

**Ագատ գետը** նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

**Մարզը** հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են <<Բջնի>> և <<Արզնի>> հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

**Արայի լեռը** (բարձրությունը՝ 2577մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

**Մարզի** հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200 – 1300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700 – 1800 մ բարձրության վրա):

**Մարզի** տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2010թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 10.3 %,
- գյուղատնտեսություն՝ 6.3 %,
- շինարարություն՝ 6.3 %,
- մանրածախ առևտուր՝ 2.9 %,
- ծառայություններ՝ 2.7 %:

**ՀՀ Կոտայքի մարզը** համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

**Մարզի տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողն **արդյունաբերությունն է**: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում Էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություններ:

**Մարզի արդյունաբերության** մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

- ✓ սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),
- ✓ ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),
- ✓ մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),
- ✓ կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

**Մարզի գյուղատնտեսությունը** մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

**Բեռնատղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

## Արովյան

**Արովյան քաղաքը** (2010թ. տարեվերջին՝ 46.8 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

## Բյուրեղավան

**Բյուրեղավան քաղաքի** (2010թ. տարեվերջին՝ 8.6 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

## Եղվարդ

**Եղվարդ քաղաքը** (2010թ. տարեվերջին՝ 12.4 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի

արտադրությունը(թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, այլուրի արտադրությունը, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

## **Նոր Հաճն**

**Նոր Հաճն քաղաքի** (2010թ. տարեվերջին՝ 10.4 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):

## **Հրազդան**

**Հրազդան քաղաքի** (2010թ. տարեվերջին՝ 53.4 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է հանրապետությունում: Քաղաքի արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

## **Չարենցավան**


**Չարենցավան քաղաքը** (2010թ. տարեվերջին՝ 25.1 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

## **Ծաղկաձոր**

**Ծաղկաձոր քաղաքի** (2009թ. տարեվերջին՝ 1.6 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

**Մշտական բնակչությունն ըստ տարիքային խմբերի  
2011թ. հունվարի 1-ի դրությամբ**



**Մանրածախ առևտրի օբյեկտներ**

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1253	1345	1448	1618	1635
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	353	436	535	711	747
կրպակներ	844	845	852	848	826
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	4	4	3	3	3
սպառողական ապրանքների շուկաներ	7	7	7	5	6
առևտրի այլ օբյեկտներ	45	53	51	51	53

**Կրթական հաստատություններ**

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Պետական նախադպրոցական	50	50	50	50	50
Պետական հանրակրթական	108	104	110	105	105
Ոչ պետական հանրակրթական	3	2	2	3	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	20	20	26	25	24
Պետական նախնական մասնագիտակ-կան (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	5	5	5	6	6
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	3	3	3	2	2

<sup>1</sup> Այստեղ և հետագայում՝ 2009 և 2010թթ. ցուցանիշներում ներառված են նաև այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

**Քաղաքային համայնքներ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	
		2010թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ
Հրազդան	ք. Հրազդան	53196	53456
Աբովյան	ք. Աբովյան	46482	46825
Բյուրեղավան	ք. Բյուրեղավան	8479	8553
Եղվարդ	ք. Եղվարդ	12302	12402
Ծաղկաձոր	ք. Ծաղկաձոր	1610	1608
Նոր Հաճն	ք. Նոր Հաճն	10334	10386
Չարենցավան	ք. Չարենցավան	24954	25053

**Գյուղական համայնքներ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**	
			2010թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
1	Ալափարս		2388	2363
2	Ակունք		2057	2039
3	Աղավնաձոր		1401	1350
4	Առինջ		5282	5446
5	Արագյուղ		1365	1354
6	Արամուս		3730	3519
7	Արզել		3247	3282
8	Արզական		2686	2699
9	Արզնի		2421	2425
10	Արտավազ	•Արտավազ • Փյունիկ	1009	1116
11	Բալահովիտ		3127	3514
12	Բջնի		2911	2929
13	Բուժական		1753	1748
14	Գառնի		7239	7165
15	Գեղադիր		659	725

\* Այստեղ և հետայսու՝ ՀՀ Կոտայքի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

\*\* Այստեղ և հետայսու՝ ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող <<Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը>> պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2011թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը՝	
			2010թ. հունվարի 1-ի դրությամբ՝,մարդ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
16	Գեղաշեն		4342	4326
17	Գեղարդ		470	475
18	Գետամեջ		650	624
19	Գետարգել		838	844
20	Գողթ		2142	2156
21	Զառ		1474	1482
22	Զովաշեն		168	142
23	Զովունի		5577	5289
24	Զովք		1018	1028
25	Զորավան		1589	1577
26	Թեղենիք		697	695
27	Լեռնանիստ		3144	3166
28	Կաթնաղբյուր		704	701
29	Կամարիս		2415	2425
30	Կապուտան		1332	1286
31	Կարենիս		869	883
32	Կոտայք		1752	1863
33	Հանքավան		149	89
34	Հատիս		354	356
35	Հացավան		603	615
36	Զորաղբյուր		2368	2188
37	Մայակովսկի		2159	2140
38	Մարմարիկ		852	876
39	Մեղրաձոր	• Մեղրաձոր •Գոռզոչ	2877	2888
40	Մրգաշեն		2202	2243
41	Նոր Արտամետ		1293	1323
42	Նոր Գեղի		6235	6345
43	Նոր գյուղ		1498	1695
44	Նոր Երզնկա		1689	1758
45	Նուռնուս		474	558
46	Ողջաբերդ		981	1039
47	Պոռշյան		5263	5279
48	Պտղնի		1480	1473
49	Ջրաբեր		514	430
50	Ջրառատ		619	591
51	Ջրվեժ		7226	7227
52	Սարալանջ		325	371
53	Սոլակ		2326	2541
54	Սևաբերդ		284	279
55	Վերին Պտղնի		873	755
56	Քաղսի		2268	2236
57	Քանաքեռավան		3543	3555
58	Քասախ		5321	5582
59	Քարաշամբ		704	689
60	Ֆանտան		1048	1004

**ՀՀ Կոտայքի մարզի պայմանական 10 000 բնակիչ ունեցող սոցիալական մի շարք բնութագրիչներ, 2010թ.**

	Ընդամենը	նրանցից՝:	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	5064	4936
Ծնվածներ, մարդ	141	67	74
Մահացածներ, մարդ	78	37	41
Ամուսնություններ	60	X	X
Ամուսնալուծություններ	7	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	24.7	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	184	89	95
հանրակրթական	1183	568	615
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	125	84	41
նախնական մասնագիտական (արհեստագործական)	22	6	16
միջին մասնագիտական	56	26	30
բարձրագույն մասնագիտական	19	127	
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	29349	...	...
Մարզիկներ, մարդ	106	8	98
Զբաղվածներ, մարդ	2724	...	...
նրանցից՝ գիտական հիմնարկներում	9	5	4
նրանցից՝ գիտության դոկտոր	0.0	0.0	0.0
գիտության թեկնածուներ	2	1	1
ուսուցիչներ	118	101	17
բժիշկներ	18	...	...
միջին բուժանձնակազմ	42	...	...
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	249	172	77
Սոցիալական ապահովության ոլորտ			

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են:



	Ընդամենը	նրանցից՝:	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1388	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	315	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	26722	...	...
թատրոն	14	...	...
համերգ	-	-	-
թանգարան	352	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	40	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	15	X	X
միջին ծանրության	10	X	X
ծանր	15	X	X
առանձնապես ծանր	1	X	X